ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆ

# ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԸ

Սեպտեմբերի մեջ, 1901 թվին, այցելեցի ս. Էջմիածին: Նույն թվի մայիսին, երբ Վենետիկ էի, մեզ ամենիս սիրելի հայր Ղևոնդ Ալիշանը իմ վրա քաղցր պարտք դրեց «Հայոց Հայրիկին կարոտագինս ողջունելու իմ կողմանե»:

Մի երեկո անմոռանալի բախտ ունեցա Հայրիկի մոտ լինելու և համբուրելու նրա Աջը:

Սիրտս ուժգին խփում էր հուզմունքից և ուրախությունից:

Առաջարկեց նստել:

— Վեհափառ Հայրիկ,—ասացի ես,—մեծ բախտավորություն եմ զգում, որ ինձ վիճակվել է բերել նահապետ Ալիշանի կարոտագին ողջույնները Հայոց Հայրիկին:

— Ա՜հ, շատ շնորհակալ եմ: Դուն Վենետի՞կ էիր, ե՞րբ էիր հոն, ի՞նչպես է հայր Ղևոնդը, աղե՞կ է:

— Այո՛, Վեհափառ Հայրիկ, այս գարնանը Վենետիկ էի և պատիվ ունեցա մի քանի անգամ լինելու ալեզարդ նահապետի մոտ: Նա հիվանդոտ է և թույլ...

— Ափսո՜ս, ափսո՜ս,—խոսքս ընդհատեց Հայրիկը,—մենք հասակակիցներ ենք. ես շատ կսիրեմ անոր. անուշ գրիչ ունի: Նա շատ է ազդեր իմ գրչի վրա, նա ինձ շատ բան է ներշնչեր: Սաս՛, ուրիշ ի՞նչ կըներ:

— Նա ինքն էլ էր ասում, որ Հայրիկը իրենից հարյուր օր, միայն հարյուր օր մեծ է, և ասում էր, թե բերկրանքով եմ լսում, որ Հայրիկը ձի է նստում և ժողովուրդին այցի է ելնում...

Միշտ նախանձում էր Ձեզ, Վեհափառ Հայրիկ, և ասում էր, թե Հայրիկի բանն ուրիշ է. նա առույգ է մնացել, որովհետև Մասիսի շուքին ներքո է քնում, հայոց դաշտերի ծաղկանուշ հովն է ծծում, Արաքսի ջուրը խմում:

Այստեղ Հայրիկը ուրախ և սրտանց ծիծաղեց:

— Ան կնախանձի ինձ, ես վաղը կարգադրեմ, որ անոր Մասիսի հողեն, Երասխի ջրեն ու Հայաստանի ծաղիկներեն քիչ մը վերցնեն և փոքրիկ արկղով մը ղրկեն Վենետիկ:

Ինչպես հետո իմացա, Հայրիկի կողմից ուղարկվել էր մի փոքր արկղ այդ արմաղաններով, բայց մինչև հասնելը, դժբախտաբար, սիրելի Նահապետը արդեն վախճանված էր եղել (1901 թ. նոյեմբերի մեջ):

— Է՜հ, դուն ալ բարով ես եկել: Ես Կովկասի մեջ երկու բանաստեղծ կճանչնամ, ու շատ կսիրեմ անոնց, մեկը մեր ուսուցիչ Հովհաննես Հովհաննիսյանն է, մեկն ալ Թիֆլիս Հովհաննես Թումանյանն է, իշտե, մեկն ալ դուն ես, քեզ ալ հիմա տեսա: Դուն անոնցմե երիտասարդ ես, այդ է պատճառը, որ միշտ ամպ ու աղբյուր, վարդ ու աղջիկ կերգես...

Այստեղ Հայրիկը նորից շատ զվարթ ու բարձր ծիծաղեց:

— Շա՞տ պիտի մնաս հոս,—հարցրեց նա:

— Մի քանի օր ուզում եմ մնալ, Վեհափա՛ռ Հայրիկ:

— Էհ, լավ է, ամեն երեկո եկ, կխոսինք:

Գլուխ խոնարհեցի ու դուրս ելա:

Ամբողջ գիշերը ես նրա թովիչ ձայնի, նրա արծվենի հայացքի ազդեցության տակ էի: Ինձ թվում էր, որ ապրում եմ նահապետական օրերում և երջանկություն եմ ունեցել խոսելու հին նահապետներից մեկի հետ: Հայրիկն իմ երևակայության մեջ միշտ պատմական կամ, ավելի ճիշտ ասած, առասպելական լուսապսակով էր զարդարված: Մանուկ օրերից երազել էի տեսնել Վասպուրականի արծվին, հայ ժողովրդի հույսերի և տենչերի կրող Հայոց Հայրիկին:

Մյուս երեկո Հայրիկը իր քարտուղար վարդապետի միջոցով ինձ կանչեց Վեհարան:

— Է՛հ, նստե, տեսնենք, դուն գիտես, որ ես ալ բանաստեղծ եմ ու շատ կսիրեմ բանաստեղծություններ կարդալ: Հոմերոսն ու Վիրգիլիոս ամենեն շատ կսիրեմ:

Ու սկսեց առույգ շեշտով անգիր արտասանել Իլիականից և Էնեականից գրաբար հատվածներ: Այդ պահին նրա գեղեցիկ աչքերը փայլում էին երիտասարդական ոգևորությամբ:

Երազի մեջ էի զգում ինձ, այնպես իրականությունն ինձ անիրական էր թվում:

— Քեզի իր գրքերեն տամ, հարկավ կարդացած կըլլաս, սակայն բանաստեղծները իրար կնվիրեն իրենց հեղինակություններեն. դուն ալ քուկիններեն ինձ կուտաս:

Եվ Հայրիկը կանգնեց իր պարթևական հասակով, գնաց մյուս սենյակը և բերեց «Ժամանակ և խորհուրդ յուր» և «Պապիկ և Թոռնիկ» գրքերը:

— Առնեք քեզի Հայրիկեն հիշատակ:

Անհուն շնորհակալությամբ առա թանկագին նվերները՝ մարմարյան Աջը համբուրելով:

Այնուհետև նա թիկն տվեց բարձերին ծալապատիկ նստելով: Ծխում էր հաստ-հաստ պապիրոսներ և իրար հետևից ծխում: Ծխելով խոսում էր անվերջ, պատմելով Վանի կյանքից, իր մանկությունից չարաճճիություններից: Պատմում էր զանազան դեպքեր մեր մոտիկ անցյալից, նկարագրում էր իր ուղևորությունները: Ես հիացած ականջ էի դնում նրան, այնքան պերճախոս էր, և յուրահատուկ պատմող: Նրա խոսքը համեմված էր ժողովրդական դարձվածքներով ու առածներով:

Հիշելով զվարթ դրվագներ իր կյանքից, ուրախ ծիծաղում էր. այնպես հուժկու թափով էր ծիծաղում, որ բազմոցը տակին խաղում էր:

Առհասարակ Հայրիկը շատ էր սիրում խոսել-զրուցել: Հարց էր տալիս և պատասխանի չսպասած՝ ինքը շարունակում էր խոսել, պատմել և ծիծաղել:

Վանքում մնացի մի քանի օր ևս ու գրեթե ամեն երեկո Հայրիկն արժանացնում էր ինձ իր տեսակցությանը: Եվ երբ մի երեկո մնաք բարև գնացի և հայտնեցի, որ առավոտյան մեկնում եմ Էջմիածնից, նա ասաց.

— Տղաս, ամեն անգամ, երբ գաս հոս, Հայրիկին չմոռնաս տեսնել:

*

* *

1902 թվի հունվարին ես նորից ս. Էջմիածնի վանքումն էի, և ինձ համար կրկընվում էին նորից գեղեցիկ երեկոները:

Գնացի տեսնելու Հայրիկին:

— Է՛հ, բարով եկար, կերևի Հայրիկին կարոտեր ես, վանքի հացն ալ անուշ է: Պատմե, նայիմ, ի՞նչ կա, ո՞ւր էիր:

Ես պատմեցի ճանապարհորդություններիս մասին:

Ապրիս, ապրիս, համ կճամփորդես, համ կգրես: Ես ալ այդպես եմ ըրեր: Հա, լավ միտքս ընկավ, ես վերջին ատեններս շատ բաներ եմ գրած: Կարդամ լսե, բայց ուղիղ և ճշմարիտ խոսե. քու անկեղծ կարծիքն ըսե, մի վախնար: Հիմա դուն պիտի մտածես, որ Հայոց կաթողիկոսի գրածները կարելի չէ քննադատել, կամ անոր բան մը ըսել, ինչպես մեր վարդապետները կընեն. երեսիս բան մը կըսեն, դուրսը ուրիշ: Ու գիտցիր, որ բանաստեղծները միշտ ճշմարիտ պիտի խոսին աշխարհիս տերերու առաջ: Մեզ ալ աշխարհը տեր շինեց. Քրիստոս տեղ չուներ գլուխը դնելու, առաքյալները անտուն ու բոբիկ ման կուգային, բայց հիմա մենք՝ անոնց ժառանգները վեհարաններու մեջ կապրինք: Անոր վրա բան մը գրեր եմ:

Եվ նորից կանգնեց իր պարթևական հասակով, գնաց մյուս սենյակը և բերեց մի տետր, նստեց բազմոցին, ակնոցները դրեց աչքերին և ուժեղ ձայնով սկսեց կարդալ: Բովանդակությունը հետևյալն էր. ինքը գնում է Թադեոս առաքյալի վանքը ուխտի, թակում է վանքի դարբասը և ասում. «Բաց, Թադեոս առաքյալ, ես եմ, քո հաջորդը, Գահիդ ներկա տերը»: Առաքյալը ներսից պատասխանում է, որ ինքը գահ չունի, այդ ի՞նչ գահի մասին է խոսքը, և որ ինքը բռնակալ, իշխան չէ, որ գահ ունենա:

Հայրիկը պատասխանում է. «Միթե չգիտե՞ս, որ գահդ ս. Էջմիածնումն է, շքեղ Վեհարանի մեջ. շքեղ գահ, ծառաներ, հարստություն»;



284.—ԱՐԾՈՒԻԿ ՏԱՐՕՆՈՅ ԹԵՐԹԸ



Խրիմյան Հայրիկի ձեռագիրն ու ստորագրությունը

«Մեր Տեր Հիսուս Քրիստոսը,—ասում է առաքյալը,—անտուն էր ու ինքը ծառա: Դուք նրա աշակերտները չեք. գնա, չեմ ընդունիլ...»:

Եվ Հայրիկին չի ընդունում առաքյալը: Հայրիկը վերջացրեց ու սրտանց ծիծաղեց: Այդ գրվածքի մեջ երևում էր Հայրիկն իր բովանդակ դեմոկրատիկ էությամբ:

Ապա նա տվեց իր գրվածքների տետրը, որ առանձին կարդամ և հաջորդ երեկո նկատողություններս հայտնեմ իրեն:

Դրանք ազատ, անհանգ այն ոտանավորներն էին, որ հետագայում տպվեցին Եգիպտոսում «Վերջալույսի երգեր» վերնագրով, բխած 82-ամյա պատկառելի գրչից:

* * *

Մյուս երեկո, խրախուսված Հայրիկի սիրալիր վարմունքից, մի քանի նկատողություններ արեցի, որ ոտանավորները երկար են, և լեզուն խառն է, արևելահայ և արևմտահայ բարբառների խառնուրդ:

— Այո, այո, ես ալ նկատեր եմ, որ իմ լեզուն խառնվեր է: Կովկաս եմ ապրում, ազդվեր եմ, միշտ ալ խառն բարբառով կխոսիմ: Իսկ որ կըսես երկար է՝ պատճառը երկար գիշերներն են,—պատասխանեց նա,—չեմ քնանար, ձանձրույթես մահն կուգամ դահլիճին մեջ, կծխեմ ու կերգեմ, այդ միջոցին ալ կգրեմ, մինչև որ քունս գա, այդ պատճառով երկար կըլլա:

— Թույլ տվեք, Վեհափառ Հայրիկ, հարցնել, ի՞նչ երգեր կերգեք:

— Շարականներ կերգեմ, ներբողներ, սուրբ հայրերի երգերեն՝ Շնորհալու, Կեչառեցու, Պետրոս Ղափանցու, Գրիգորիս Աղթամարցու, և Բաղդասար Դպիրի սիրո տաղերեն ալ կերգեմ: Ղափանցին լավ տաղասաց է, Քուչակ Նահապետ անոնցից վեր է, բայց ժողովրդի երգեր ամենից վեր են. ես շատ կերգեմ մեր Վանա և Մուշի գեղջկական երգեր, որ սովորել եմ վաղուց Վարագա և ս. Կարապետի ուխտավորներից: Բայց ամենից շատ կսիրեմ Խորենացու ողբը, անոր համար ես մի եղանակ եմ շինել ու կերգեմ: Ինձի կթվա, թե այդ ողբը հայ ազգի ճակատագիրն է ու ամեն դարու ողբը, ինձի այնպես կերևա, թե քերթողահայրն Մովսես այս օրերին համար է գրել...

Հանկարծ հիշեց Նարեկացուն և ոգևորված խոսեց Նարեկի վանքի, Վանա ծովի գեղեցկության մասին, անգիր ասաց Նարեկացու աղոթքներից, պատմեց նրա տեսիլը, նրա մասին եղած ժողովրդական ավանդությունները:

— Նարեկացու լույս հոգին միայն կրցավ հասկանալ Քրիստոսին և տվեց քրիստոնեությունը:—Այսպես ամփոփեց Հայրիկն իր խոսքը:

* * *

Վերջին անգամ Հայրիկին տեսա 1906 թվի աշնանը. ցավալիորեն թույլ էր և գունատ:

— Հիվանդ է Հայրիկը,—ասաց,—շատ չի ապրի Հայրիկը... Է՜հ, շատ մարդ կա պառկած հողի տակ՝ փարավոններ, արքաներ, ներոններ, Խորենացի, Նարեկացի, Վիկտոր Հյուգո... վաղն ալ ես կպառկիմ հողին քնով: Դուն կուգաս վանքը և Հայրիկին շիրիմը կտեսնես, կուլաս, չես լա—այդ չեմ կրնար ըսել, բայց այն ժամանակ կզգաս Հայրիկին կարոտը, հոստեղ ուրիշը նստած կըլլա ու չես կրնար Հայրիկին հետ խոսիլ ու ծիծաղել...

Տխուր նախազգացումով պաշարված, ուշի-ուշով դիտում էի նրան—արծվենի հայացքը, ուր դեռ արև կար, հոգեթով ձայնը և հնադարյան մագաղաթի նման դեղին Աջը:

Զգում էի, որ վերջին անգամ եմ տեսնում նրան՝ հայ ժողովրդյան այդ մեծ զավակին: Մի երկար ու խորին համբույրով նրա Աջն առա և հեռացա մռայլ ու տխուր:

Ես հավատացած եմ, որ մինչև մահս իմ հոգում անջինջ և անաղարտ կմնա նա՝ այդ մեծ հայրենասերը:

Երբեք չեմ կարող մոռանալ նրա հայացքը, նրա նվիրական ձայնը: Այնպես խորն է ազդել իմ հոգու վրա:

Եվ հայ ժողովուրդն էլ չի մոռանա նրան: Քանի հնանա, այնքան ավելի պիտի պայծառանա նրա հիշատակը: Նա դարերի միջից պիտի նայի հայ ժողովրդին և պիտի խոսի նրա հետ հարազատ լեզվով, նրա նվիրական իղձերից և անմահ նպատակներից:

Ժողովուրդը նրան չի մոռանա երբեք, որովհետև նրա սրտից էր եկել և դեպի նրա սիրտն էր գնում:

**(«Իմ հուշերից»,** Հայպետհրատ, Երևան, 1946 թ.)